ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդայի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

ՀՀ Արմավիրի մարզի Ջանֆիդա գյուղական համայնքի գյուղապետարանը հայտարատում է մրցույթ գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-1/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների լուծմանն ու գնահատմանը, կազմում է համայնքի բյուջեյի նախագիծը, իրականացնում է հաշվապահական հաշվառման վարման վճարման փաստաթղթերի կազման, ներկայացման, հաշվետվությունների ստուգման, ամփոփման և ներկայացման աշխատանքները, ապահովում է համայնքի բյուջեյի միջոցների նպատակային օգտագործումը, մասնակցում է տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերի նախապատրաստման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ:
Առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է.
- առնվազն միջնակարգ կրթություն
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին», «Գնումների մասին», «Եկամտահարկի մասին», «Իրավական ակտերի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտության իմացություն, ինչպես նաև տրամաբանելու , տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.
Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն: